РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ЗДРАВООХРАНЕНИЯ
Научно-Практический Центр Судебной Медицины
ДИРЕКТОР

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF HEALTH
Scientific-Practical Center of Forensic Medicine
DIRECTOR

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԴԱՏԱԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՏՆՕՐԵՆ

0025 Հայաստանի Հանրապետություն Երևան, Մ. Հերացու փ., 5/1
5/1 M.Heraci str., Yerevan, Republic of Armenia, 0025
0025 Республика Армения, Ереван, ул. М.Гераци 5/1

Tel: (37410) 56 71 08,
e-mail: info@formed.am

7qp21-7

Թիվ 1511-

«05» 03 2019

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ-Ի
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ Շ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 01.03.2019 թվականի 341-67 գրության հայտնում եմ, որ ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է. <<...տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով>>:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին և 5-րդ կետերի համաձայն, աշխատողի անձնական տվյալները փոխանցելիս գործատուն պարտավոր է աշխատողի անձնական տվյալները չհայտնել երրորդ անձանց՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է աշխատողի կյանքին և առողջությանը սպառնացող վտանգը կանխելու համար, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում, ինչպես նաև աշխատողների անձնական տվյալներին ծանոթանալու իրավունք վերապահել միայն հատուկ լիազորություններ ունեցող անձանց, ընդ որում՝ այդ անձինք կարող են ստանալ աշխատողի միայն անձնական այն տվյալները, որոնք անհրաժեշտ են որոշակի գործառույթ իրականացնելու համար:

Այսպիսով, Ձեր կողմից ներկայացված տեղեկատվության տրամադրումը հնարավոր չէ, քանի որ կան աշխատակիցներ որոնք ազատվել են աշխատանքից և հնարավոր չէ պապիպանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին կետը, ավելին հարցմամբ չի նշվել նախատեսված բացառությունների մասին և չի ներկայացվել ապացույց՝ հատուկ լիազորություններ ունեցող անձ հանդիսանալու մասին;

ՏՆՕՐԵՆ՝ Մ. Ս. ԲԻՇԱՐՅԱՆ